



ԾԱՂԻԿ Հաբաթը երկու ան-
դամ կը հրատարակուի Չորեք-
շաբաթ եւ Շաբաթ օրերն : —
Տարեկան բաժմանորդագրութեան
դին է 100 զրուշ արծաթ : —
Վեցամսնայն 50 . — Գաւառաց
համար 115 զրուշ . — Վեցամ-
սնայ 60 . — Ծանուցման տողը
5 զրուշ :

40 ՓԱՐԱ

ՀԱՆԴԻՍ

ՓԱՐԱ 40

Որ եւ է նամակ կամ գրութեւն
պէտք է ուղղել ,
Առ Արտօնատեր և Տնօրիչ
ԱՆՏՈՆ ՍԱԳԱՅԵԱՆ
Էսկի Զաղթիկ ճատէսի
Նշան էֆ. Գէրպէրեանի Տպա-
րան :

Խմբագրութեան յանձնուած
գրութիւնք եւ չեն տրուիր :

ՔՈՂՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Ազգային տեսութիւն (Պատրիարքական Փոխանորդութիւն) . — Ամուսնական խնդիրք — (Շարունակութիւն նախորդ թուէն) — Վերջին լուր . — Զեկոյց . — Նորավակ (իրենց երջանկութեան առաջին ժամը) . — Առանցն տեսաւաննեւ . (Դրախոմապի հետեւանքները) . — Այլ եւ այլք . — Ալցելութիւն նախորդութիւն . — Քըլէնձէլէրի . — Ֆողովրդային առողջապահութիւն . — Տիկին բանդալոն վիպասանութիւն . — Ծանուցմունք :

ԱԶԳԱՅԻՆ ՏԵՍՈՒԻԹԻՒՆ

ՊԱՏՐ. ՓՈԽԱՆՈՐԴՈՒԹԻՒՆ

Ազգային վարչութեան օրակարգին մէջ է Պատր. նոր Փոխանորդի մը ընտրութեան խնդիրը , ոյր վերաբերմամբ զանազան առաջարկութիւնք կան :

Ուժանք կը խորհին եպիսկոպոս մը կոչել յայս պաշտօն , ուժանք , ըստ աւանդութեան՝ վարդապետ մը և ուժանք ալ միշահանայ , և անշուշտ այս տարբեր առաջարկութեանց հեղինակներն իրենց ուրոյն տեսութիւնները ունին :

Եպիսկոպոսի առաջարկութիւնը մենք իսկ պիտի պաշտպանէնք , եթէ բաժնուէին տեղական գործերը հանրային գործերէ և առաջնորդ համար մի մասնաւոր ժողով կամ յանձնաժողով հաստատուէր ընդ նախագահութեամբ Պատ. Փոխանորդին :

Բայց եթէ Պատր. Փոխանորդի պաշտօնը պիտի ըլլայ , ըստ առաջնոյն , գլխաւորաբար նախագահել Պատաստանական խորհրդոյ՝ որ կ'զբաղի առն և կնոջ միջեւ ծագած գատերու քըննութիւնով , իրաւախոհութեամբ կարգադրել զինդիրը և հաշտեցնել երկու կողմերը , յայնժամ շատ անհմաստ բան մը կ'ըլլայ այդ խորհրդոյ նախագահութեան պաշտօնին կոչել եպիսկոպոս կամ վարդապետ մը — որոց մին կամ միւսը — ամուրի են , և , հետեւաբար . բոլորովին անդէտ ամուսնական խնդրոց , մանաւանդ կը պատահին այսպիսի խնդիրք , որոց քննութիւնը կատարել իսկ ներելի չէ իրենց անշուշտ շատ լուրջ պատճառներով :

Իսկ այսպիսի պաշտօն մը որ լըծորդեալ է ընդ փոխանորդութեան , խիստ լաւ կը յարմարի քահանայի , որ իրք ամուսնացեալ եկեղեցական անգէտ չէ ամուսնական խնդրոց :

Ազգային տարեգրութեան մէջ օրինակներ ալ արդէն կան :

Նաեւ , ինչու չբաջալերուի և չբարձրանայ քահանայութիւնը , քանի որ սա — քահանան — կը խոստովանցնէ , կապելու և քակելու իշխանութիւն ունի , ժողովարդի բարոյական հայր և իրատատու և թէ զիրիստոս . կը պատարագէ :

Մեր ազգային եկեղեցական պատմութեան մէջ կը կարդանք թէ քահանայք — որպէս և աշխարհականք —

աթոռ ու ձայն ունեցեր են միշտ եկեղեցական ժողովներու մէջ , ինչպէս որ ունին նաեւ այսօր կրօնական ու եկեղեցական Համագումար ժողովներու մէջ և այս բան շատ նպատակա յարմար է ոգւոյն և սկզբանցը Հայաստաննեայց եկեղեցւոյ , որոյ կառավարութիւնը սահմանադրական է :

Արդ , քանի որ մեր եկեղեցին խմբէր զքահանայն , քանի որ սա եւս պաշտօնեայ է նոյն եկեղեցւոյ , բարոյական հայր է ժողովրդեան և քանի որ զիրիստոս կը պատարագէ . ուրեմն որպիսի արգելիչ պատճառ կալ որ չկարենայ փոխանորդել զՊատրիարքըն այսպիսի պաշտօններու մէջ , որ Պատր. Փոխանորդի կը վերաբերին ,

Իրերը չդատենք նախապաշարմամբ , այլ քննենք բոլորովին պաղարեամբ և առանց կանխակալ ոգւոյ :

Այսպէս , կարող ենք ըսել թէ Պատր. Փոխանորդութեան պաշտօնը քահանայի յանձնուիլը մեր Գեր . և Արժ . Եպիսկոպոսաց ու վարդապետաց արժանապատուութիւնը վիրաւորող պարագայ մը չէ բնաւ , վասն զի սոքագործելու համար բազում ասպարեզներ ունին . յորս կրնան փայլիլ , բաւականէ որ արժանաւորութիւն , եկեղեցւոյ և Ազգին ծառայելու համար աշխոյէ . եռանդ , հմտութիւն , ճարտարութիւն և կորով ունենան և սիրայօթար գտնուին պատասխանելու ժողովուրդի ձայնին , որ Աստուծոյ ձայնն է :

.....

ԱՄՈՒՄՆԱԿԱՆ ԽՆԴԻԲՔ (1)

(Նախորդ Բառեւ)

Բացայայտ է թէ այդ պարտաւորութիւնք ոկիլըքէն հետէ կային և կան, բայց գրամօժիտի սովորութիւնը մեր մէջ նոր բան մ'է, որ գեռ մուտ չգտած՝ մեր հայրեր ու նախնիք գրամական միջոցներ բնաւ խնդիր չէին ըներ, որովհետեւ նորա թէպէտ նոր գաղափարաց անձանօժ՝ սակայն քաջ գիտէին թէ նոյ նպարտաւորութեանց կատարումը իրենց—այր մարդոց—կը վերաբերի, որոց բաժինն է տունէ դուրս քրտամբ երեսաց աշխատիլ:

Միթէ նաեւ մեր հայրեր և նախնիք չէին որ առանց գրամօժիտի ամուսնալով ընտանիք կազմած, նոցա և իւրեանց զաւակաց նիւթական ու ֆիզիգական բարեկեցութիւնն և դատիքական բարեկեցութիւնն և դատիքական բարոյական բարեկեցութիւնն հոգայու գովելի ջանքեր ու աշխատութիւն նուիրած և մեր սերունդը պատրաստած են,

Անոնք որ կը տարակուսին մեր յայտնած այս ճշմարտութեան վրայ, կարող են քննել ու համոզուիլ թէ՝ մեր հայրեր և նախնիք առանց գրամօժիտի ամուսնութիւն կատարելով հանգերձ՝ բնաւ թերացած չեն իւրեանց պարտաւորութեանց մէջ, մանաւանդթէ անոնք էին որ կը թութեան պէտքըն զգացած և անոր տարածմանն համար այնքան մեծամեծ ու գնահատելի ջանքեր, աշխատութիւնն և զոհութիւն նուիրած են, այնպէս որ, կը ըստ լի մեր տղէտ հռչակուած հայրերու և նախնեաց օրսվաստի իբր 50-60 տարի առաջ—հիմակուընէ շատ աւելի բարեկարգ գարժարաններ կային և խնամեալ կը թութեանց առաջային գաղափարաց աւելի բարեկարգ գարժարաններ կային և խնամեալ կը թութեանց:

(1) Նախորդ թուով հրատարակեալ յօդուածի վերջին պարբերութիւնը որ է ամենք ալ իլ հարցնենք, այդ պարտաւորութիւնք նոր երեւան եկած են արդեօք, որդեռ գըրամական միջոցաց հայժայթման լինդիր ծագի, թէ միշտ կային, պէտք է կարդալ «մնկք ալ կը հարցնենք թէ, այդ պարտաւորութիւնք նոր երեւան եկած են արդեօք, որդեռ Զի գրամական միջոցաց հայժայթման խնդիր ծագի» թէ միշտ կային»:

Պէտք է յարենք թէ նոյն վրիպակ տը-պազրական սխալ է,

Համար լուրջ ջանքեր տեղի կունենա-յին :

Իբր օրինակ կըսենք թէ՝ Խասդիւ-զի, Թերայի, Հալաթիոյ, Օրթաքէօյի, Եւսկիւտար Ս. Խաչի և Ս. Կարապետի, Պալատու, Գում-գափուի Մայր Եկեղեցւոյ և Սամաթիոյ թաղային վարժա-րանք ընդհանրապէս ծնողաց նիւթա-կան ու բարոյական օժանդակութեամ-բը ճշմարիտ լառաջադիմութեան խիստ վայլուն շրջաններ ունեցած են :

Ի հնումն, ասկէ քիչ ժամանակ ա-ռաջ, և թերեւս այժմ իսկ երիտա-սարդ մը երբ փափագէր ամուսնան-նալու. ծնողք՝ կամ ազգականք կը-սէին՝ «տղաս, Ֆեռու լեցուցե՞ր ես»:

Նոյն ատեններ առածի կարգ ան-ցած այս խօսքի նշանակութիւնը կար-ծենք բնաւ մեկնութիւն չվերցներ, վասն զի հարցնել կուզէին թէ՝ տղաս, կարո՞ղ ես ընտանիք և զաւակներ խը-նամել, պահպանել և նոցա բարեկե-ցութեան միջոցներն հայժայթել:

Բայց քննենք տակաւին յիշեալ յօդուածի շարունակութիւնը և ապա քննենք ու բացատրենք գրամօժիտի մեր մէջ մուտ գտնելուն իսկական պատճառները, որ նոյն յօդուածի յարգոյ հեղինակին նշանակած պատ-ճառներէ բոլորովին տարբեր բաներ են :

(Գալ անդամ)

Վերջին լՈՒՐ

Մաղիկ մամուլը դրուած պահուն իմացանք թէ Խառն ժողովը իւր ե-րեկուան նստին մէջ Պատր. Փոխանորդ ընտրեր է զինք, Ասլանեան Տ. Ներսէս Ե. Վարդապետ:

Ն. Գերապատուութիւնարժանաւոր, հմուտ, պարկեշտ և ժանրաբարոյ ե-կեղեցական մ'է, և Ազգն ի՞նչ պաշտօնի որ կոչած է զինքը՝ առանց ընդ-դիմութեան դացած և օգտակարապէս ծառալած է ամենուրեք.

ԶԵԿՈՅՑՑ

Նկատելով որ Մաղիկի ստացած նոր ուղղութենէն հետէ շատ թիւեր սպառած են, որոցմէ Խմբագրատան մէջ չեն գտնուիր և երբեմն հարկս

կըլայ որ գաւառներէ ուղղեալ յանձ-նարարութիւնները կատարելու համար կ'ստիպուինք դուրսէն գնել, ուստի որոշեցինք շաբաթ մ'անցած թիւերն 2, երկու շաբաթ անցած թիւերն 3: երեք շաբաթ անցած թիւերն 5 զու-րուշի վաճառել:

Իսկ մէջ ամիս անցած թիւերու համար 10ը, և աւելի շատ ժամանակ անցած թիւերու համար 20 զրշ գին պիտի պահանջուի.

Անոնք որ գժկամասին սոյն կար-գագրութենէ, պարտին խնամօվ պա-հել իրենց թերթերը և այլոց շտալ յընթերցումն :

ՆՈՐԱՎԵՊ

ԻՐԵՆ ԵՐԱՆԻԿԱՆՆԵՐՆ ՊԱՏԱԼՅԻ ԺԱՌ

Կոմս տ' էկըվիլ նոյն օրը զբօսարանը ճաշած էր. իւր ապարանը վերադար-դած պահուն որ Վարէն փողոցին մէջ կը գտնուէր, բնակարանէն հեռացած ըլլալուն վրայ կը ցաւէր որովհետեւ չափազանց ձանձրացած էր. համակ-րելի դէմք մը տեսած չէր անդ և ճաշէն վերջ, յիմարաբար քսան և հինգ լուի կորուսած էր, ինքիրմէ դժգոհ էր, տխուր, յուսաբեկ այն առաջին մշուշներուն ազդեցութեան ներքեւ որք համայն Փարիզ մելամալ-ձութեան քողով մը կը պատեն:

Իրեն համար սովորութիւն ըրած էր ամուսնալուն ի վեր իւր տան մէջ նախաճաշ ընել և ցերեկուան ճաշն դունուրեք. ոչ թէ իւր կինը չը սի-րեյուն համար, այլ ազնուականաց նը-ման ձեւակերպութեան մը մէջ գըտ. նուելու համար լոկ :

Եւ երբ իւր Տրիոն հօրաքոյըն իրեն ներկայացուցած էր իւր փոքրիկ պաշտ-պանեան որ այսօր կոմսուհի տ' էկըվիլ եղած է, կարծած էր ինք թէ՝ այդ-երկու որբերն, երկուքն եւս հարուստ երկուքն ալ նշանաւոր, սիրուն ըն-տանիք մը պիտի կազմէին, տարփաց-ուաց ընտանիք մը :

Առանձին տեսակցութենէն, Տիկին Տրիոն կրցած էր հաւատալ թէ՝ իւր երազը օր մը պիտի իրականանար-խօսեցեալք խանդավառ զգացմամբք չամակեալ էին. Եւ իրենց հարսան-

եաց հանդէսը կատարուած էր շքեղ երեկոյթով մը , լրագրաց էջերուն մէջ փայլուն գովեստներով :

Եւ երիտասարդ ամոլից ամուսնութիւնը նմանած էր գրեթէ իրենց համայն բարեկամներուն ամուսնութեան երենց մեղրալսւինն անցուցին երկու ամիս Պրիմանիոյ մի գեղեցիկ գեղեկին մէջ , բացարձակ առանձնութեան մը մէջ . երկու ամիս որսական ազմկանց մէջ , վառէնի փողոցին իրենց շքեղ ապարանին մէջ , օժեակ մը ի Քօմէտի և Օտէօն թատրոններն այն պարզ թիկնաթոռին առել զոր երեմն կը գըրաւէր կոմսը ամէն ներկայացմանց ժամանակ . . .

Հորաքոյրը շատ անգամներ մանկամարդ կնոջ հարցուցած էր:

—Երջանիկ ե՞ս , աղջի՛կո :

Երջանիկ . . . գուցէ ո՛չ երազածին չափ , բայց իրնա՞ր գանգատիլ . կը ճանաչէ՞ր մին իր բարեկամուհիներէն որ իրմէ աւելի երջանիկ եղած ըլլար , —Այո՛ , հօրաքոյր իմ , այո՛ , ամուսինս չատ սիրուն է :

—Սիրո՞ւն , սիրո՞ւն , կը գոչէր ծերունի հօրաքոյրը . այդ ածականը բարեկամի մը կը նայալ տրուիլ , այնպիսի բարեկամի մը որ գիտէ յաջողութեամբ պարել առանց պատուելու ձեր ժանեակներն , բայց ամուսնոյն համար որով հետ ընդ միշտ կապուած է մարդ , սիրուն ածականը գոհացուցիչ չէ .

Եւ կ'աւելցնէր , գլուխը շարժելով :

—Այս տղայք անհանգիստ կը գոնուէր զիս . իրենց բան մը կը պակսի . . . չեմ գիտեր արդարեւ թէ ինչ չկը պակսի . . .

Բ.

. . . կոմսը իւր տունը մտած էր . հակառակ իւր սենեկին ճոխ գորդերուն , շքեղ զարդարանաց , չէր կը առար փարատել այն տիտուր մելամազնութիւնը որ կը նեղէր զինք առաւօտէն ի վեր , Եւ ո՛չ մի աղմուկ կար ապարանին մէջ : Սառնաշննչ հանդառատութիւնը մը ամենուրեք , Թերեւս իւր կինը կուգար զինք վերագտնել , և իւր կանացի ծիծաղներովը զուարթացնել զինք : Բայց անիւներու հետքեր նըմարած էր ապարանին գաւթին մէջ :

Հնչակը քաշեց տեղեկութիւններ իմանալու համար :

—Տիկինը գուրս ելա՛ւ :

—Այս՝ պարո՞ն . Տիկինն արդէն մեկնած էր երբ պարոնը ներս մտաւ :

Մեկնած՝ գեղեցիկ արդուգարդով , անշուշա երթալ բարեկամուհեաց տունը շատախոսելու համար :

Այդ մեծաշքեղ ապարանն , իւր ճոխ սրահներովով , մեծագին կարասիներով , կարծես իրեն վրայ ճնշում ի գործ կը դնէին երբ ինքինքը առանձին կը գործին կը գտնի :

Զրոսնելու համար ծաղկանց ջերմանոցը գնաց , և տեսաւ որ խոշոր ծաղիկները քաղուած էին , ցողուններ , տերեւններ ցիր ու ցան կը մնային հողին վրայ :

Պարտիզպանը կանչեց .

Ո՞վ կորեց այս ամենը .

Պարտիզպանը ճշգորէն չը կրցաւ պատախանել այդ հարցման . Միայն ըստ :

—Թերեւս տիկինը կտրած է . . . և առանց ինձ իմացնելու . որովհետեւ այդ տեսակ ծաղիկներն քաղելը կոտորած մ'է ինձ համար :

Վայրկեան մը կոմսը դադրեցաւ նախանձութենէն , բարկացաւ , յետոյ սկսաւ ժապիլ :

—Է՛հ . իմար եմ ե՞ս . . . տղայութիւն . . . հանդիսի մը համար քաղած ըլլալու է ալս ծաղիկները , մանկամարդ կանանց ընկերութիւնը վայելելու համար :

Բայց ալս ամէնը իւր ձանձրոյթը կ'աւելցնէր , այդ տեսակ մը անձկութեան մէջ ուր ինք կը գտնուէր :

—Մհ , մը մշեց , չարչարանաց վայր կետն մ'անցուցի :

Զերմանոցէն գուրս ելաւ , որոյ գալարիքն իրեն տխուր կ'երեւէր առանց կարմիր և կապոյտ ծաղկանց թերթերուն : Փորձեց կարդալ գիրք մը , սահեցնելու համար այդ ժամերն , բայց մատենագարանին մէջ առած ամէն մէկ գիրքն յարմար չեկաւ իրեն : Գնաց գիտել վերջին գիւղանը . կարն զոր գեռ նոր գծած էր . Փորօի գեղեցիկ գործերէն մին էր : Եւ զզալով որ նեղութիւն մը կը չարչարէր իր միրաց . արահէն գուրս ելաւ , և մտաւ մեծ սրահին մէջ ուր կը գտնուէին իրենց տան ամենէն հին նկարներն , ընտիր և գեղեցիկ :

(Եաբ.) (Թարգմ.)

Բիկի ԱԱԼ Մ. Գ. ՄօԶելլն

ԱՌ-ՑՆԻՆ ՑԵՍԱՐԱՆՆԵՐ

(Դրախտամայի հետեւանելու)

Պ. Յիսու—այս է նոյն երիտասարդին անունը—ուրախ զուարթ ուղղակի իւր տունը գնաց Ամբակում աղայէն հրաժեշտ առնելէ յետոյ՝ տետրակը ձեռքն առաւ , ուշագիր ինամօք զայն աչքէ անցուց , և ինչ ինչ սըրբագրութիւնները ըրաւ անոր վրայ :

Հետեւեալ առաւօտ կանուխ ելաւ անկողնէն , անգամ մ'ալ աչքէ անցուց իր սրական բանապեղանէնինը , հպարտ գոհունակութիւն մ'զդաց գոդցես ինք եւս հիացաւ իր հանճարին վրայ և քիչ էր մնացեր թէ ծափահարէր ինքինքը . զի յաչս իւր նշանաւոր բանաստեղծ մէզած էր :

Այս էր իւր հաւատն իրեն համար , ճիշդ նման անոնց՝ որ երբ երկու տող բան գրեն—հոգ չէ սակայն եթէ իմաստէ զուրկ լինի , կապակցութիւն չունենայ և յեզուի տրամաբանութեան դէմ լինի—և կամ երկու տող ոտանաւոր գրեն—բայց ամենեւին փոյթ չէ եթէ արուեստ չկենակի և իմաստ չպարունակէ , այլ բաւական է որ նոյնայն գլուխակ , այլ բաւական է որ նոյնայն գլուխակ , այլ ձեռք կուտայ . ունունտաքի տանա պագ—իրենք զիրենք գրագէտու քերթող—կը խընդիրենք , խազանին տակը քերթող չհասկցուի և այնպէս կը համարին թէ իրենք մէյմէկ ժիւլֆակը , ժիւլ Սիմոն , Կամպէդդա . Լամարթին կամ Վիքթօր Հիւկոններ են :

Միթէ ընդհանրապէս այսպիսի յաւակնութիւններ տածող չե՞ն այն միջանաւարտներ , որ տեղ չե՞ն սղմիր , մարդու չե՞ն հաւնիր , գործի չե՞ն հաւնիր , արժանիքը կուրանան և փորձառութիւնը չե՞ն յարգեր :

Ստուգիւ շատ ողորմելի են , վասն զի իրենց գատարակութիւնը չե՞ն զգար , կը կարծեն թէ բան մ'են , մինչդեռ սորվելու պէտք ունիր , բայց յանցանքը իրենցը չէ , այլ գրութեան , որ հիմնեալ է կարգ մ'աւելորդ ունիւններու վրայ և տրուած ուղղութիւնն է շփացածութիւն :

Ահա այս է մեր մէջ գաստիարակութիւնն կոչուած բանը , որուն համար ամեն տարի իզուր մեծաքանակ դրամ կը վատնուի :

Պ. Յիսու լուացուեցաւ , մազերը

զարդարեց ու իւղոտեց, պահեստի հանդերձներն հագաւ, ակնոցը քմթին անցուց, պաստօնը ձեռքն առաւ, հայելին նայեցաւ, շատ հաւնեցաւ ինքն իրեն, գրպանը դրաւ իր բարձր հանճարին արդիւնքն եղող բանաստեղծութիւնը և սիդաճեմ քալուածով մը ճանբայ ելաւ Ամբակում աղային տունը երթալու համար :

ինչե՛ր չէր մտածեր ճանբան գացած ատենը. ի՞նչ մեծ ու փայլուն երազներ կը տեսներ. ո՞հ, կ'ըսէր, անգամ մը որ տեսնէ նազելաշուք տիկինը մեծապատիւ Ամբակում աղային իմ այս աննման բանաստեղծութիւնս, շատ պիտի հիւնայ, սքանչանայ, զիս պիտի չնորհաւորէ, ձեռքս թոթուէ, ծափահարէ, գրուատէ, անհուն և անհամար գովեստ ու մեծարանքներ պիտի ընծայէ և ամենայն իրաւամբ զիս Պողոսի թղթոց մեկնութիւնը գրող երանելոյն պէս մինչեւ եօթներորդ երկինքները պիտի բարձրացնէ :

ի՞նչ արժանաւոր վարձատրութիւն և ի՞նչ արդար հպարտութիւն բանաստեղծի մը համար՝ որ իւր աշխատութիւնը կը գնահատուի յարդ ու արժանիք ճանցող անձերէ և թէ մանաւանդ գեղեցիկ սեռէն :

Նիտակը. թէ մեծապատիւ Ամբակում էֆէնտին և թէ իւր անուափայլ տիկինը շատ կիրթ ճաշակ ունին, բանէ կը հասկնան և գնահատող են :

Ո՞հ, արդեօք ի՞նչ մեծ ու փառաւոր ընդունելութիւն և խորին մեծարանքներ պիտի ընեն ինձ. մեծապատիւ Ամբակում էֆէնտին գեռ գործը չտեսած՝ տնհուն գոհունակութիւն զդաց և հազարումէկ չնորհակալութիւն յայտնեց. շատ ազնիւ մարդէ. արդեօք իւր ազնուաշուք տիկինն ի՞նչեր պիտի ընէ :

Պ. Սիսուի երեւակայութիւնը լըցուած ու պաշարուած էր ալսպիսի մըտածութիւններով և գտնելիք ամենափառաւոր ընդունելութենէն յղփացած գրեթէ փիրէի մը պէս կը ցատկէր ճանբան և հասաւ մեծապատիւ Ամբակում էֆէնտիին տունը. ուր մենք ալ պիտի հասնինք յառաջիկայ չորեքշարթի օր :

ԱՅԼ ԵՒ ԱՅԼՔ

Երեւելի Գաղիացի քարոզիչ մը, որ մը եկեղեցւոյ մէջ կանանց պարտուց վրայ խօսելէ վերջ կ'ըսէ. «Ահա, կը տեսնեմ ձեր մէջէն կին մը որ իւր էրկանը անհնազանդ կը գտնուի, և ձեզ պիտի ցցունեմ զնա, ապա գիրքը գըլիուն նետելով»: Որչափ կին կար ամենքն ալ գլուխնին վար ծռեցին,

* * *

Նոր ամուսնացեալ մարդ մը, գիշերուան նին Քլիւպէն գինով տուն դասնալով, հովանոցը կը բանալ և այնպէս ննջասենեակը կը մտնէ. կինը երբ կը տեսնէ զնա՝ կը գոչէ. «Ի՞նչ կը նես, մարդ, խե՞նդ ես»: «ոչ», կը պատասխանէ սա, «բայց գիտէի թէ փոթորիկ պիտի ելլար, անոր համար նախապէս պատրաստութիւն տեսայ»:

* * *

Գատաւաւոր մը ձեռքը գտնուած քանակի մը ծայրով բանտարկեալը ցցուցնելով կըսէ «Այս գաւազանիս ծալը սրիկայ մը կեցած է»: «Ո՞ր ծայրը, ծէր», կը պատասխանէ չարագործ:

* * *

Բանջարավաճառ մը փողոցին մէջ անխնայ կերպով իւր էշը կը ծեծէր. վասն զի յամառ կերպիւ մը չէր ուզեր քայլել. պատուհանի մը առջեւ նստող կին մը, որ կը գիտէր այս տեսարանը, համբերութիւնը հատնելով կը պուայ. «Խիղճ չունի՞ս, մարդ»: Մարդը իւր բարկութեան միջոցին կը պատասխանէ «միտին շողգամ մնաց»: ուրիշ բան չը կայ:

* * *

«Ոիրելի պարո՞նս», կըսէ օր մը պարտական մը իւր պարտատիրոջ. «իմ պարտքս ժամանակաւ պիտի հատուցանեմ, և որովհետեւ ժամանակը գրամ է, ուրեմն որչափ ժամանակ ըսպասես, այնչափ աւելի ապահով կերպով առնելիք պիտի ստանա»:

* * *

ի՞նչ կարող է ընել պղտի գժութիւն մը:

Հեղինակ մը կը գրէ թէ աշխարհիս ճակատագիրը երբեմն շատ աննըշան գէպքերէ կախումն ունի: Շառլ Պօնարառթի և իւր կնոջ Լէթիթիայի մէջտեղ փոքրիկ գժութիւն մը կարող էր ջնջել ամուսնութիւն մը որ ծնունդ

տուաւ նարօլէօն Պօնարառթի և Վաթէպալօի ճակատամարտին: Եւ ճիշդ է այս ենթադրենք թէ պղտի գժութիւն մը տեղի ունենար Ադամ ու Եւայի մէջտեղ, ի՞նչ պիտի ըլլար այն տաե՛ն . . . :

* * *

«Եատ կը փափաքէի որ եւային տեղ գուն ըլլայիրա ըսաւ տղայ մը իւր մօրաքրոջ՝ որ նշանաւոր էր իւր շատակերութեամբ:

«Ի՞նչո՞ւ համար», հարցուց այս վերջինը:

— «Վասն զի, փոխանակ Ադամին բաժին հանելու, ամբողջը գուն պիտի ստեէիր»:

* * *

Վաճառական մը իւր մէկ ընտանեկան պաշտօնեայն ծաղրելով «կովի կը նմանիս» կըսէր. պաշտօնեայն որ շատ տեղ գործակատարի պաշտօն վարած էր, պատասխանեց. «Ճէ՛ր, ի՞նչի նմանիլս չեմ գիտեր: միայն սա գիտեմ թէ շատ առիթներու մէջ զնեզ ներկայացնելու պատիւն ունեցած եմ»:

* * *

Երեւելի փիլիսոփայի մը հարցուցին թէ գեղեցիկ կնոջ մը սահմանն ի՞նչ է, փիլիսոփայն պատասխանեց`

— Գեղեցիկ կին մը մարդուս աչքին արքայութիւնն է, իսկ հոգւոյն դժուսքը:

* * *

Ազգային ժողովոյ անդամներէն մին իւր մէկ պաշտօնակցին ըսաւ օր մը, ժողովին մէջ բնաւ բերան բանալդ շտեսայ. «կը ներէս էֆէնտի»: պատասխանեց բմիւսը. «քու ատենախօսութիւններդ յաճախ յօրանջել տուին ինձ»:

* * *

Օր մը խոստովանանքի մէջ քահանան կը հարցնէ «փառամոլ չե՞ս մի գու»:

— «Չէ, ես ալդչափ պատիւ չունիմ»:

«Որկրամ՞ո՞լ»:

— «Ատոր ի՞նչ ըլլալն անդամ չեմ գիտեր»:

Ուրեմն կնամոլ ես»:

— «Բնաւ երբէք»:

«Մարդ Աստուծոյ», ըսաւ սիրտը նեղանալով «Հապա ի՞նչ ես»:

«Հացագործ», պատասխանեց, «Եթէ չես հաւատար՝ վրաս գլուխս տես, բոլոր ալիւր է»:

Պ. կ. Հ.

ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆ

(Նախօրդ Ռուբեն)

—Հիմակ պվազըմ օլտուգ ճա պիտի
պոռամ ըսաւ թէպէր ոտք ելնելով,
քա պոռամ պիտի, իրաւ օր պոռամ
պիտի.

—Խենդ ես, քա թէպէր. տուռ
արացին վրա՞ս պիտի պերես, սապըռլը
էղիր քիչ մը. մեղա՞յ ։ ։ չօճու՞ի էս:

—Քա նա՞սըլ սապըռլը ըլլամ, ան
պէսպէօիւք կնիկը, երէթմիշ տարու
խըռփած կնիկը կրտօխը շարխա պիտի
անէ տէյի իմին ճահիլիս կօրծը ասանկ
ե՞տ մնայ ։ ։

—Ինչ՞ու պօշտեղը կը պատռտուիս
կոր, թէպէր, մտիկ չընե՞ս. երէկուտն
օրիկո օհարսակ տէմ էլայ կացի, տու-
ռլ զարկի, պացուեցաւ.

—Պացուեցա՞ս ըսիր, էյ չօք շիւ-
քիւր:

—Անդիէն աստիէն խօսք խօրաժա-
ըսելն իքէն պիչմով մը լախըրտըն
պացի. չերկնցնեմ, կէնճը չէ չըսաւ ա-
մա ։ ։

—Ամա՞ ի՞նչ ։ ։ չըսես քա:

—Անդիէդ ի՞նչ է. կեցիր օր ըսեմ.
թրախօմա կուզէ կոր եղեր մանչը ե-
րեք հարիւր կառսուն նոհուտ սրակ,
հանկցա՞ր հիմայ:

—Իշտէ ատիկայ չեղաւ:

—Եղաւը չեղաւը չիրտեմ, էյէր ատ
խըտար փարան համբելու կարողու-
թին ունի՞ նէ, ինծի խապար տուր
օր, ես ալ երթամ մանչուն թարաֆը
ճուղապ տամ:

—Եա հապա մեծաւորը թրախօ-
ման եասախ է ըրեր ըսին նէ ։ ։ ժա-
մերը կոնդակ կարդացուեր է ըսին նէ:

—Քա ճանըմ մարիկ, կեցիր ինծի
ինչե՞ր կըսես, հիշ ալընթըյին առաջ-
քը կառնուի՞ հազար եասախ ընեն նէ
տուողը կէնէ կուտայ:

—Էյ հա ատիկայ իրաւ է, կեցիր
օր ըսեմ, մեր էտեւի սօխախը խլավուզ
կնիկ մը կայ քի մենծ տուներ կը մըտ-
նայ կելլայ, անցածներս օր մը ախ-
ճիկանս վարպետին տունը կացի աս
ալ հոն էր՝ թրախօմայի վրայ լախըր-
տը պացուեցաւ նէ, ևատէթ պիտի
ըլլայ իրարո՞ւ կաղտուկ թրախօմա պի-
տի տան առնենց ըսաւ:

—Զի համնին տալու ըսաւ Արուս

լահհուէ մ՞ալ հրամցնելով թէպէրին :
—Ես քեզի պան մը լսե՞մ, Արուս,
գոչեզ թէպէր, ես վախմին իմ էր-
կանս բարա չեմ տուեր օր, հիմայ ել-
լամ ախճիկանս համար փարա համբեմ,
քա մեղայ ։ ։ ամ բազարէն ծի՞ն ծա-
խու կառնեն կոր, չե՞ն ամնար աճա-
պա հիմրկու տէլիխանլըները հէմ ախ-
ճիկ հէմ փարա, ո՞ւր լսուած է ասանկ
պան : հայտէ ճէհէզը ինչ է նէ ընեմ.
փարաս ալ ինչ է, տալը խօլայ է նէ
խող իրենք ալ տան մեր զաւկներուն
կոկանը փարան պազնիքիթօխմախը ըլ-
լալը աճապա չե՞ն կիտեր, չօք շէ, իմ
շատ պան : Հիմաճուկ տա ըսած ի-
րէքնիդ, իշտէ օրը 5-6 զրուշ վաստը-
կող մարդ մը, իրեք հարուր կառսուն
զուրուշը մէկ տեղ մը պէրած ունի՞ օր
ելեք է ազջիկ զաւկէ մը ատ խըտար
փարա կուզէ կոր. վայնի վրանին, փա-
րալով կը կարգուին ամա, սօղրամ ան
առած փարանուն տասը կսան խաթը
կը խարճեն :

—Շիակ է ամա կրնաս նէ հաս-
կցուր. էյ հիմակ ի՞նչ ճուղապ պիտի
ամա . հա եօխսա չէ, կէնճը ինծմէ
ճուղապի կը պէքլէյէ, 340 զր թը-
րախումա կրնա՞ս կոր տար :

—Իրեք հարիւր կառսուն զր չէ՝
քի իրեք հարուր քառսուն ստակ պի-
լէ յեմ համբեր. իշտէ աս աղէկ մը
կիտցած էզիր, կուզէնէ առնէ, կուզէ-
նէ չառնէ, խուռուլը տուն տեղ, ճերը
ճէհէզը տիւլիկն, խուսուրսըզ զա-
ւակ. խաթ մըն ալ փարա, ըլլալիք պան
չէ:

—Կերթամ մէյմը կըսեմ, նայինք
ինչ ճուղապ առնեմ նէ՝ քեզի կըսեմ.
տուն եա չորեքշաբթի եա շաբաթ մէյ-
մը էկուր :

—Կալը կուգամ. ամա իշտէ ասանկ.
մնաս պարով:

—Երթաս պարով. հոդ մի ըներ.
ան ըլլայ նէ պաշխասին խըթլըխը
շիկայ եա:

Գ. Փ.

ԳԸՇ ԷՑԼԵՆՃԵԼԵՐԻ

(269 Նօմէրօտան պագըյէ)

—Մատմազէլ թաթին, Վիզավի:
—Աք էտէրսին միւսիւ, պէն միւսիւ
կրէկուառ իլէ վիզավիյիմ. զաթէն իլք

աքշամտան տա բանտէվումըզ վար:

—Պագսանա, Մարի, էյէր պու սէ-
ֆէրտէ պէնի վիզավի գապուլ էթմէզ-
սէն սուարէնիդի հարամ էտէրիմ, պիլ-
միշ օր:

—Այլքըու ո՞յ սըքըլլեօրում. Քար-
լո. պու նէ՝ զիփիթ սաքըզըմըշըն սէն,
հաթըրընը գրանալը:

—Պաշըմըտա գըրսան սէնին իլէ
մութլաքա պիր բոլքա օյնաեաճազըմ
վէսսէլամ:

—Տուրուն, պու պէօյլէ օլմագ ա-
եաք օյունու տիուիժէ էտէն քիմ իսէ,
տամալարը ա ալըրուն :

—Աքէրիմ ձուզէ, պազը եէրտէ

բէք նօգթալը լակըրուը էտէրսին:
Պու միւքեալէմէյէրին ճէրէյանը
էոնապնտա, այսգ օյունու տիրէքթօ-
րու միւսիւ Պաթիսթ օյնաեաճարըն
էսամէսինի վէ վիզավի վէ անկաժէլէրի
իլք աքշամտան հազըլլամըզ օլտուզըն-
տան պաշլատը պիրէր պիրէր օգումա-
եա .

Կէլ իլէրի, ճէպի տէլիք միւսիւ Բոլ,
Վիրիմին իլէ կէճէ կիւնտիւզ մէսուտ օլ:

Զէվզէքլէրին խիւլասասը ա'խ Վէնսան,
Պիրիճիին էօլիւր էկէր սէն օլմազսան:

Եա Զիրըզդաը Սալլաբաթի իթիէն,
Նէլէ՛ր էթտին թաթիին է նէլէ՛ր սէն:

Կէ՛լ պագալըմնանէլէնմէ. պօն սուառ,
Թիմէ՛ սաթարն Աննէթանը Կոէկուառ:

Ճառիս Բասքալ, շանըն կիթսին ճի-
ճանէ ,

Ուսկուկ կիպի եարին վարսա տահա:
Էյ իւլիւֆէր պալըք պէյնի Մանասը:

Տէմէ՛ սագըն Վէրօնունա էլմասը .

Պուու Փօզէֆ պուզ տէրեասը տօն-
տուրուա,

Մաննիկին էյվալլահ էթ տարըլթմա:

Ապուղըութ Փօրժ Կազընդվարի խենդ-
Միքէ ,

Գըզ տէյիլ քի գազ վէրէն եօգ հիչ
սիզէ :

Հաֆիֆ Գառլո, Պաթիսթ օլան սայ-
կըսըզ,

Ծըմբըն օլուր էլ այթընտան սայըսըզ
Ամա՞ն Բիէռ ա'խ պաղըրմա սէվտալը,

Զիշի տէյիլ զաննըն կիպի ճիւնհալը:
Ոէնտէ սագըն տէնկսիզ Պաթիսթ ա-
լէմտէն,

Գամպուռունլա կէշիրիրէր գալէմտէն:

Մարսիլէնցիօ, թօդաթէ եէրսին, կութմօրնինկ,

Էսա պարխանէէն պախչի, տէվունց, տի առնինք,

—Վիզավինիզտէն մէմնուն օլտունուղմու միւսիւլէր վէ մատմազէլլէր:

—Մէրսի, միւսիւ Պաթիսթ մէրսի, ֆագաթ արմօնիկսիզ օյնաեամաելզ:

—Բէք ալէա, շիմտի օնուտա սըրաեա գօրըմ, Մանուկ աղպարը գարշըլէրին էվինէ եօլաեըպ քէօրիւկիւ արմօնիի կէմիրթտիրիրիմ ամմա, մատմազէլ էօժէնի հիմմէթ իտէր իսէ չալմաղա:

—Սանտութ, սիզէր արմօնիկի կէթիրտին, չալմաք իշիւն տիւշիւնմէյին, էլիմտէն կէլտիղի գատար մէմնուն էտէրիմ:

—Էնֆինըման մէռսի,

—Ծո Մանուկ, եօգարը կէլ:

—Ի՞նչ է աղէ:

—Հայտէ գարշըլէրին էվինէ կիթպէնտէն սէլամ սէօլէ, պու ագչամուփաք եօլու պիր էլլէնճէլէրի գար, պիրազ արմօնիկիէրինի վէրսինէր էլէր արզու իտէրլէր իսէ, պուեռուրսունլար,

—Բէք աղէկ:

—Հա՛ էլի հաթրըմա կէլտի, կէլիրիքէն աշաղտան մատմազէլին քիւրքիւնիւ պէրապէր կէթիր,

(Տէլո՞ն)

ԺՈՂՈՎՐԴԱՅԻՆ ԱՌՈՂՉԱՊԱՀՈՒԹԻՒՆ

—

Է:

Զի՞կէ շինուած անօթներն

Առտնին գործածութեանց մէջ զինկէ անօթներու մէջ ջուր և կամ ուրիշ սննդական նիւթեր գնելը վտանգաւոր է և շատ պարագայներու մէջ մահաբեր: Որչա՛փ անգամներ ընտանեկան յարկաց մէջ զոհեր կունենանք չնչին պատճառներով և արդեօք քանի՛ զոհեր տուած է մարդկութիւնն մինչեւ ցարդ պղնձէ և զէնկէ անօթներ գործածելուն համար:

Բազմամարդ քաղաքաց, մանաւանդ մայրաքաղաքաց մէջ, այս մետաղն ամենէն աւելի կը գործածուի, տարբեր ձեւոց ներքեւ, մեր սափորներն, դորերն, կուժերն, դաշտերն, ջրոյ ընդու-

նարաններն, և ուրիշ անօթներ որոց գոյութիւնն այնքան անհրաժեշտ է մեր տուներուն մէջ, այս ամէնն զէնկէ շինուած են:

Առողջապահութեան պարտաւորութիւնն է արգիւել այս տեսակ մետաղէ շինուած անօթներու գործածութիւնն յայտնելովիւր ահաւոր ժամանակ դին դին պատճառած աղետներն:

Զուիցերիոյ. կեգրոնական Աւուրիոյ մէջ, գրեթէ ամէն ուրեք սկսած են գործածել ջուր պահելու համար փայտէ կամ երկաթէ անօթներ, հարաւային եւրոպիոյ մէջ մետաղին յաջորդած է կաւն, ուսկից կը պատրաստուին այսօր ընտիր անօթներ որոցմէ միշտ երկիւղ ընաւ ունենալու չենք:

Զէնկը օդին և ջուրին ազգեցութեամբը կը ժանդութիւն այսինքն տառածանի ու վահագի խաւով մը կը ծածկուի, որ թունաւոր է և շատ վտանգներ կը յարուցանէ մեր գործարանային կենաց մէջ:

Զէնկի ժանդէն թունաւորեալներն ատամոքսալին նեղութիւններ կունենան, փսխելու ցանկութիւն մը կունենան, թանջքի կ'ենթարկուին և աղեաց ցաւերով կը տառապին:

Զէնկի գործածութիւնն մեծ է արուեստին ճարտարութեան մէջ: Բաւական է որ այս մետաղէն չը շինենք այնպիսի առարկայներ որոց մէջ պիտի դնենք մեր սնունդներն, լինին նոքա հեղուկ կամ հաստատուն:

Հեռագրական թելերն զէնկի խաւով մը կը պատեն ժանդէ ազատ պահելու համար: Իրմէ կազմուած զանազան տեսակ աղերն, ոչ միայն իբժշկութեան կը գործածուին ջղային նեղութեանց, ծաղկախոտի և ալլ հիւանդութեանց գէմ, ալլ և ճարտարութեան մէջ կը մտնեն և իրենց օգտակաց աջակցութիւնն կը նուիրեն նկարչութեան իբր ներկ, կոյողիններու աղտեղութիւններն ու գարշահուտ մըթնոլորտն կը յաքրեն, և ալին:

Եթէ երբէք ստիպուած ենք միշտ զէնկէ անօթներ գործածել, պէտք է որ խոհեմ լինինք և զգուշանանք նմանօրինակ անօթներու մէջ գնելէ սընդտական նիւթեր՝ մանաւանդ ջուր եթէ մեր տան մէջ ջրոյ աղբիւր չկայ և միշտ ստիպուած ենք մօտակայ աղբերակէն կամ հեռաւոր տեղէ մը մեր տանըն մէջ ջուր բերել տալու:

Մ. Գ. Մօջեսն

Ի Ա Ն Ա Թ

Սէնէի սապրդ միսիլլու ինձէ սազթագըմը՝ բէնճշէնպիհ, նումաա. վէ նումաա էրթէսի կիւնլէրի սաաթ 10 պուչուգտան կէճէնին սաաթ օինէ գատար Գալաթատատ վօյփոտա գարշըլստա մէջհուր Արթին աղանըն լոգանթարկուատա իճրաի ահէնկ իտէճէկի կիպի, Բանկալթիտէ համմամըն գարշըլստա Մ. Տիմ թրաքինին կազինօսընտա կիւնտիւզ սաաթ Զտան կիճէնին սաաթ պէշինէ գատար իճրաի ահէնկ իտէճէք աիր:

Գալաթատատ Արթին աղանըն լոգանթարկուատա ֆիւրուլիմ օլընանթամկարըն նէֆասէթի վէ մէշրուպաթըն էլլիկի մալիւմ օլուպ, թէշրիփէ րաղպէթ պույուրաճագ զէվաթըն ֆիյաթճա աախի պունտան պէօլէ մէմնուն իտիլմէլէրինէ սայ օլընաճազի իլան օլունըր:



Ո Ր Ի Բ Ե Ն Մ Ե Լ Ք Ո Ն Ե Ա Ն Ե Կ Ը Ն Կ.

Ո Ս Կ Ե Բ Ի Զ-Ֆ Ա Մ Ա Գ Ո Ր Ծ

Բերա, հրապարակ թէնէլլ նէլ 519

Վաճառումն և նորոգութիւնք սուկերչական նիւթոց և ժամացոյցի շըդթայի և ալլն:

Ռուբէն Մ'կընեռն և Ընկ պատիւ ունին ծանուցաներ, արգոյ հասարակութեան, թէ ի թէրա Թիւնէլի հրապարակուն վրայ Ոսկերիչ-ժամանակործի վաճառատաւն մը բացած է ուր ամեն տեսուկ սոկերչական նիւթեր ժամացոյցներ չընացներ և այն կոգ ճառունին և կոյողին ու որոգութիւն գիւ ամատչեր պայմաններով և ամառ գնով:

Ուստի կը յորդ որենք ազնիւ յահամուրդներն որ անդամն մը այցելեն լիշեալ զանդառատւնն, ապահով ըլլուզով որ ամեն տեսակ գիւրութիւնն և նիւալք պիտի գտնեն նոյն ամատչեր պայմաններով և ամառ գնով:

ԱՐՏՈՒՐԱՏԵՐ ԵՒ ՏՆՈՐԻՆ
ԱՆՏՈՆ ՍԱՔԱԵԱՆ

ԽՄԲԱԳԻՐ Մ. ԳԱՓԱՄԱՄԱՃԵՆ

ՏՊԱԴՐՈՒԹԻՒՆ

Ն Շ Ա Ն Գ Է Ր Պ Ե Ռ Ե Ա Ն

(ՀԱՄԴԻՔ)



ՀԱՆՐԱԾՈՆՈԹ ՆԱՐԹ ՊՐԻՒԻՇ ԲԻՊԵՐ
ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

Մեր յաճախորդներու փափաքա-
նաց համաձայն, մեր այս տարուան
քառոչուէ մուճակներն, որը իրենց վր-
բառայ իրբեւ նշան կշիռ մը կը կրեն
իմաստ ճաշակաւոր, նուրբ և հաստա-
տուն շինուած են կուտա բերեավ:

Պօլսոյ հրապարակին վրայ երկար
ատենէ ի վեր ճանչուած է թէ մեր
քառոչուէ մուճակները կը գերազան-
ցեն քսան տարիէ ի վեր գործածուած
բոլոր մուճակները:

Մեր այս մուճակներու ներքին կող
մը կշիռի մը և արտաքին կողմն ալ
առիւծի մը պատկերը դրոշուած է
իրբեւ նշան: կը վաճառուին ի Պօլիս
Սուլթան Համամ աղրիւրի մօտ Սե-
պուհ ազա Տէմիրճեանի թիւ 47 և
49 խանութն և բոլոր քառոչուէ մու-
ճակ վաճառողներու քով կեդրոնա-
տեղին է ի Պօլիս, Պահճէ դաբու, Գո-
ճաման Օղլու խան, Ճօրճի կիորոլի թիւ
և մթերանոցը:

— 96 —

— Զիս կը վախցունես, եղբայր. եթէ ալ
զիս չը սիրէ:

— Ինչպէ՞ս, քեզ ա՛լ չը սիրէ: Միթէ այդ
վախկոտ ու ամշկոտ աղջիկը ըսա՞ծ էր որ կը
սիրէ զքեզ:

— Ա՛հ, ոչ . . . բայց երբեմն՝ առանց բառ
մը իսկ արտասանած ըլլալու՝ սիրահարք կրնան
երար հասկընալ . . . Ա՛հ, եթէ խարուած
լինիմ, շատ դժբախտ պիտի ըլլամ:

— Լոէ՛, խենթ դուն ալ. տակաւին քսան
երկու տարեկան չի կաս. այդ տարիքի մէջ,
սէրը անմիտները միայն դժբախտ կընէ. և դուն
անմիտ չես:

— Բայց ե՞րբ պիտի երթաս տեսնելու Պ.
Բանդալոնը:

— Զիս քիչ մը հանգիստ թող. քանի մը օ-
րէն կերթամ:

— Վա՛զը, սիրելի եղբայրս, վա՛զը, կաղա-
չեմ, կը պաղատիմ քեզ:

— Աստուած իմ, որչա՞փ աճապարոտ ես:

— Դուն կըսէիր ինձ թէ. երբոր գործ մը
կրնայ երջանիկ ընել մեզ, երբէք պէտք չէ որ
հետեւեալ օրուան ձգուի:

— Ճշմարիտ է. Տէղոժիէս, որուն երգ երն
իրենց արժանիքն ունին, կըսէ. Այսօր մեզ կը
վերաբերի, բայց վաղը և ոչ մէկուն է:

ՓՈՐԹՈՒՆԱ:

ԱՆՇԱԽՄ ՈՒՄՈՒՄԻ ՍԻԿՈՒՐԹՅԱ

ԳՈՒՄԲԱՆԵԱՑՈՂ

1686 թէ Պէրլիուէ նէկոսի օլունման առաջնական առաջնորդ:

ՍէրՄԱԵԼ 1,875,000 ՖՐԱՆԴ 0ԷՐՄԱՆԻ 3,750,000 ՖՐԱՆԴ

ԻՇԹԻԵԱՅԹ ԱԳՃԵՍԻ 1,337,500 ԻՇԹԻԵԱՅԹ ԱԳՃԵՍԻ 3,099,367. 15 ՖՐ

Տէրուատուէթ բիաչապնտա պիրլէմիշ օտն իշպու սիկուրթա գումբ անեալաբը. քէֆալէմի միւլէկապիլէ իլէ հէր նէ զի էմթաա վէ ագչէ կրուօլարընը, տէնիլ, նէր վէ գառա նազինեալթը թէկլիքէլէրինէ գարշը զայէմիլէ Փուերէպազի շէրակիթիլէ արկուր իմաստ իմաստ իմաստ:

ՀԱՆՁԵԱԹԻՇԵ

ԵԱՆԴՐՆԱ ԳԱՐԵԸ ՍԻԿՈՒՐԹՅԱ ԳՈՒՄԲԱՆԵԱՑՈՂ

1874 թէ Համարուէկառ նէկոսի օլունման առաջնորդ:

ՍէրՄԱԵԼ 3,750,000 ՖՐԱՆԴ

ԻՇԹԻԵԱՅԹ ԱԳՃԵՍԻ 600,000

Իշպու սիկուրթա գումբանեասը, հէր նէ զի էմլաք վէ չշեաեւ, անպար վէ մաղաա
զա աէրունլէրինաէքի էմթաանելը, էն զինատէ Փակեիտ պախչ շարթլար իլէ սիկուրթա
իտէր: Թազինիլի մալիւմաթ ալմագ իսթէնէնէր, պալէտաէ զիքը օլունան իւչ գում-
բանեալաբըն ումու մի մասլահաթկիւզարը պուլունան իոթանպօլտա Պահչ-Գարու-
սունտա Բասիմ բաշա խանընտա նիւմէրո 13 վէ 14 տէ ՏԻՐԱՆ Ս. ՄԱՆՈՒԿԵԱՆ էֆէն-
տիեէ միւրաճաաթ իթմէկէ տավէթ օլունու:

— 93 —

— Ա՛հ, պարոն, ձեր քոյրն որքան սիրուն,
որքան շնորհալից աղջիկ մըն է. քիչ մը առաջ
հետո խօսելու պատիւն ըրաւ ինձ. ուրիշ օրի-
որդաց պէս յաւակնոտ և սնամիտ չէ. համես
տութիւնը կը փայլի կարծես իր շիկնոտ այտե-
րուն վրայ: Երբոր եղբօրս հետ ուղեւորութե-
նէ վերադառնանք, գալու ձեզ տեսնելու թոյլ-
տուութիւն պիտի ընէք ինձ, այնպէս չէ, պա-
րոն:

— Այսո՛, անշուշտ:

— Կը տեսնե՞ս, Ատոլֆ, եղբայրս քոովդ սի-
րահարեր է. լուցկիի մը պէս կրակ կառնէ այդ
ստահակը:

— Է՛հ լաւ, եթէ էլվինան միշտ սիրելու ըլ-
այ, ո՞վ գիտէ . . .

— Ա՛հ, այսո՛, պարոն, քոյրերնիդ ինձ պա-
հեցէք, կաղաչեմ. ուրիշի հետ մի ամուսնացնէք
զայն:


— Անհոգ եղիր, տղաս, էլվինան տակաւին
այնչափ պկտիկ է որ զինքն այսչափ կանուխէն
ամուսնացնել միտքէս անգամ շանցնիր:

— Ֆրէտէրիք, երկար ատեն ուղեւորու-
թիւն չպիտի ընենք. այնպէս չէ:

— Զիս հանդարտ թո՞ղ, ստահակ տղայ.
գրաւ կը դնեմ որ պիտի սիրահարիս մէն մի

ՄԱՅԵՐ ԳՈՒՄԲԱՆԵԱՄՅՈՒՄ

ՐՈՒՊԱ ՄԱՂԱԶԱՍԵՐ



Գիօօդւմի թղունել գաշշշար
Մամս զօկ Քիօօքրի զմշը

Պէօյիւք առանցար գարըւար ահ Լիգանիւթըւար գըւըւար
Վէ չօձուքւար իշտն հազըր վէ ըստարըւար էնդ այի բուռուա-
լար ֆանէալար չ միհիէն էն էնդին պէ պղուրինիւմ պէ

Հիշ օն պէշ կիւնահ մէ կունէ էնդին մօսու մալլար պիւ-
րուս իտէճէք տիր :

Սաթւլան մալլին քեափիւր պէրինձի վէ տայանագու

վէ ախուզիւն մալլար տըր :

Մայէր դումիանեարին գահուէս սոյածա կթի վէ էն-
դին ՄԱԱ Սաթւլանի տան իուարէթ սուրուննու օլոսուղու

պիր զիսութէ մաղազամըր թէւրիփ իտէն բաղպէթըւու

պիւշտիւն իշութէքէն տիր :

Շիւոք իւրէնչիթին վէ գաւորի հաջուր պէ սկանի

Հայտէին պատալլար Մաթէրէ :

ԽԵԱՆ ՄԱԶԼՄԵԱՆ

Կ Ա Բ Գ Ե Ր Ո Ւ Կ Վ Ե Ր Ա Բ Ե Ր Ա Լ Ա Գ Ր Ա Ն Ք Ն Ե Ր

ԵՐԱՄԸ , ԱՊԼՊԱՏ , ԵՒ ՃԱՆԱՋԱՆ ՆԵՐԻԿԸ

Դարակի Մահանայէ քուզը թիւ 48
Սութան Մէջմէս կէմինէր գուց թիւ 36

Պ Օ Լ Ի Ս

ՀԱՅ ԹԵԱՎԱՃԱՐԱՏՈՒՆ

ՊԱՀԱՃ

Ցիւկի մէջ ուր կանգ առնունք :
— Ոչ , ոչ , պարոն Բանդալոն , ձեր քրոջմէն
զատ ուրիշ մէկը չպիտի սիրեմ երբեք . Ա՛հ ,
բոլքա պիտի խաղացուի , երթամ ձեր քրոջ հետ
բոլքա մը դառնամ . խենդի պէս բան մը ե-
ղայ , ինձ պահեցէք զինք :

— Գնա բոլքադ խաղա . . .

Պարահանդէսը մինչեւ ժամը չորս տեւեց .
այն ժամանակ ներկայք առաւօտեան ընթրիք
մը ընելու հրաւիրուեցան :

Առողի իր կնոջ հետ խօսելու առիթներ
վնտուեց . բայց Աէզառին խոյս տուաւ անկէ և
անոր խօսքերն անպատասխանի թողուց :

— Բանդ գէշ է , Բանդալոն ըսաւ թրէտէ-
րիք . առած կնիկդ գեղեցիկ է . քաջ բացէ ի
բաց ըսեմքեզ թէ երջանկութիւնդ նախանձելի
հանդամանք մը չունի :

Դ

ՏԱՄՆ ԵՒ ՎԵՑ ԱՄԻՄ ՑԵՏՈՅ

Ժամնեւվեց ամիս անցաւ այն հարսանեաց
հանդէսէն յետո , որոյ նկարագիրը դըինք մեր
ընթերցողաց առջեւ :

— 95 —

Ֆրէտէրիք Տիւվասէլ իր եղբօրը հետ Անգ-
լիա , իտալիա և Գերմանիա ուղեւորութիւններ
կատարեց : Երբոր Բարիզ վերագարձան , Կիւս-
դավ այնքան տղայամիտ և այնքան անփորձ
չէր որքան իր մեկնումէն առաջ . թէեւ օտար
երկրաց մէջ տարփային արկածներ ունեցած էր,
չէր մոռցած սակայն իր գեղանի Էլվինան , ո-
րուն սիրահարած էր Բանդալոնի հարսանեաց
գիշերը :

Ուստի Բարիզ հասնելէն յետոյ ըսաւ . իր եղ-
բօր :

— Առողի բարեկամդ տեսնելու պիտի եր-
թա՞ս , եղբայր . իր քրոջը հետ ամուսնութեա-
նըս արտօնութիւնը պիտի խնդրե՞ս իրմէ :

— Այո՞ , քիչ մը սպառէ սակայն :

— Էլվինայի առողջական վիճակին վրայ տե-
ղեկութիւններ պիտի առնո՞ւս : Ա՛հ . արդեօք
ո՞րչափ մեծցած է հիմակ :

— Թերեւս . կը փափաքի՞ս որ աւելի մեծ-
ցած ըլլայ :

— Ա՛հ , ոչ , եղբայր . կուզեմ որ տասն և
վեց ամիս առաջ ինչպէս որ թողուցի այնպէս
գոտնամ :

— Ես ալ կը փափաքիմ որ ամենեւին փոխ-
ուած չըլլայ . բայց տասնեւվեց ամսոյ մէջ որ-
քա՞ն բաներ կը պատահին :